Լիլիթ Ալեքսանյան
ԵՊՀ Տեսական փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի հայցորդ,
ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի օգնական
Էլ.հասցե՝ alexy.ph@mail.ru

ՍԻՄՎՈԼԸ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Փիլիսոփայության մուտքը հետմոդեռնիզմի շրջան հաստատում է սիմվոլի փիլիսոփայական զարգացման նոր ուղիներ, ինչը ենթադրում է սիմվոլ հասկացության վերլուծության և նորովի իմաստավորման անհրաժեշտություն: Սույն հետազոտության նպատակն է մոտենալ սիմվոլ փիլիսոփայական հասկացության սահմանման խնդրի լուծմանը. սիմվոլ հասկացության բովանդակությունը հստակեցնել՝ քննարկելով դրա տարածական առանձնահատկությունները: Նաև՝ առաջնորդվելով սիմվոլի՝ փիլիսոփայության պատմության հոլովույթում ձևավորված հայեցակարգերով, ներկայացնել սիմվոլի այն առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են փիլիսոփայության շրջանակներում հետմոդեռնիզմի հարացույցի արմատավորմամբ: Հարկ է ընդգծել, որ նշյալ հասկացության սահմանման խնդիրը ոչ թե վերջնական սահմանում փնտրել և գտնելն է, այլ՝ սիմվոլի կառուցվածքը հասկանալը, դրա ընդհանրական բնույթը և գործառնական նշանակությունը բացահայտելը:

Հիմնաբառեր. սիմվոլ, նշան, նշանակություն, նշանային ձև, դենոտատ, դեսիգնատ, հետմոդեռնիզմ:

Ներածություն

Փիլիսոփայական հասկացությունների շարքում իր կարևոր տեղն ունի «սիմվոլ» հասկացությունը: Այն կայացման երկար ճանապարհ է անցել՝ հունական դասականությունից մինչև պոստմոդեռնիզմի փիլիսոփայություն: Այս համատեքստում, թվում

է, թե փիլիսոփայությունը վաղուց պետք է հրաժարված լիներ այդ հասկացությունից (հասկացության բազմիմաստության և բովանդակային անորոշության պատճառով), սակայն այսօր պոստմոդեռնիզմի փիլիսոփայությունը կարևորում է «սիմվոլ» հասկացությունը, այնպես, ինչպես ժամանակին մինչսոկրատիկները, Պլատոնը և Արիստոտելը, ստոիկները, միջնադարյան սխոլաստիկան:

Ի՞նչ է սիմվոլը, ո՞րն է սիմվոլի սահմանումը և ի՞նչու այս հասկացությանը տրվող ցանկացած սահմանում (նույնիսկ ամենահաջողվածը) միշտ ենթակա է հետագա լրամշակման: Այս հարցերին պատասխանելով՝ փիլիսոփայությունը հիմնավորում է սիմվոլ հասկացության գոյության և փիլիսոփայության հիմնական հասկացություն լինելու արդարացվածությունը, հստակեցնում «սիմվոլ» հասկացության կիրառության սահմանները, լուծում սիմվոլի սահմանման խնդիրը: Պետք է նշել, որ հայերենում «սիմվոլ» հասկացության հոմանիշներ են դիտարկվում «սիմբոլ», «խորհրդանիշ», «խորհրդանշան» բառերը(Սուքիասյան, 1967, 997), սակայն, հոդվածում օգտագործվում է միայն «սիմվոլ» հասկացությունը՝ ելնելով այն նկատառումից, որ բովանդակային առումով սիմվոլ լեզվական միավորը ավելի լայն է և համընդգրկուն: Նշյալ մոտեցմամբ սիմվոլի օրինակ կարող է լինել հավերժության հայկական սիմվոլը (տես նկար 1), որը ծագում է սվաստիկայից և ունի հստակ հայկական մեկնաբանություն: Ամենահին ներկայացումները հայկական բարձրավանդակի ժայռապատկերներում են:

Նկար 1

Հայկական հավերժության սիմվոլ



Միևնույն սիմվոլի այս տարբեր պատկերումները սիմվոլացնում են արևը, կյանքը, կրակը, կայծակը, պտղաբերությունը, ծնունդաբերությունը, առաջընթացը, զարգացումը: Հոդվածը սիմվոլ հասկացության տեսական-մեթոդաբանական վերլուծության փորձ է:

Սիմվոլի մասին տեսությունները և սահմանումները բազմաթիվ են: Միայն Ա. Ֆ. Լոսևը ավելի քան 60 սահմանում է առանձնացրել՝ ընդգծելով որ «....սիմվոլ հասկացությունը և՛ գրականության մեջ, և՛ արվեստում կիրառվող ամենախորհրդավոր և հակասական հասկացություններից մեկն է, սակայն, չնայած դրան, այն շարունակում է մնալ փիլիսոփայության, սոցիոլոգիայի, գեղագիտության, մշակութաբանության, գրականագիտության և այլ գիտությունների կարևոր հասկացությունը» (Лосев, 1995, էջ 5): Նույն հեղինակը հասկացությունը նկարագրում է նաև հետևյալ կերպ. «Սիմվոլը դիալեկտիկական ամբողջություն է, երևույթի իմաստը, ընդհանրացումը, գաղափարական-կերպարային ձևակերպումը, ներքին-արտաքին արտահայտվածությունը, առարկայի և գաղափարի, էության և երևույթի միաձուլ-

վածությունը: Դրա արտաքին ձևն ունի իր ինքնուրույն արժեքը, իսկ բովանդակությունը դրսևորվում է սինկրետիկության և ամբողջականության մեջ: Այն ոչ միայն ձևի, իմաստի և գաղափարի վերաներկայացում է, այլև լրացում և ամբողջականացումն այդ ամենի: Կառուցվածքային տեսանկյունից այն ծավալված նշան է, որը նշանակված եզակի իրերի անմիջական բովանդակության հետ ընդհանուր ոչինչ չունի» (Лосев, 1982, էջ 322): Գ. Գադամերի կարծիքով «Սիմվոլը նշանակում է մի բան, որի իմաստը ոչ թե դրսևորման պարզության, տեսքի և բառային ձևակերպման մեջ է, այլ այն նշանակության, որը տարածվում է դրա սահմաններից դուրս» (Гадамер, 1988, էջ 117): Պ. Ռիկերտը սիմվոլը սահմանում է այսպես. «Ես սիմվոլ եմ անվանում իմաստային ցանկացած կառույց, որտեղ ուղիղ, առաջնային, տառացի իմաստը միաժամանակ նշանակում է վերացական՝ երկրորդային, այլ բան ասող իմաստ, որը, սակայն, կարող է հասկանալի լինել միայն առաջինի միջոցով» (Розин, 2003, էջ 112): «Սիմվոլը արխետիպ-ծրագիր է, որը պատմական բեկումնային իրադարձությունների ժամանակ, ազատում է մարդկանց «ճնշվածությունից», չի ենթարկվում «ռացիոնալ լուծման», տարածություն է ազատում ստեղծագործելու համար՝ դրանով իսկ թույլ տալով վերադառնալ առաջնահիմքերին» (Евзлин, 1993, էջ 38): Կ. Յունգը սիմվոլը սահմանում է որպես կոլեկտիվ անգիտակցականի դրսևորում, որը մարդկային մշակույթի հիմքն է (Юнг, 2006 էջ 64): Ալ. Նալչաջյանն իր «Էթնիկական հոգեբանություն» գրքում նշում է, որ «Յուրաքանչյուր սիմվոլ գտնվի անհատական, ազգային, թե համամարդկային մակարդակում, միշտ որոշակի հոգեբանական առանձնահատկությունների խտացում է, ծածկագրման յուրահատուկ համակարգ: Այն մտածողությունը դարձնում է ավելի տնտեսված, առանց խոսքի մասնակցության փոխանցում է այնպիսի տեղեկություններ և զգացմունքներ, որոնք կարծես ինքնին հասկանալի են» (Նալչաջյան, 2001, էջ 167):

Այսպիսով, փիլիսոփայական գիտելիքի զարգացմանը զուգընթաց տրվել են «սիմվոլ» հասկացության բազմաթիվ սահմանումներ, ձևավորվել են մեկնաբանության էպիստեմոլոգիական, գեղագիտական, էվրիստիկ և այլ տեսանկյուններ, տարբեր հայեցակարգեր են ձևակերպվել, սակայն, այդուհանդերձ, պատասխանել, թե «ի՞նչ է սիմվոլը» հարցին, դեռևս չի հաջողվել: Սիմվոլի շուրջ ձևավորված փիլիսոփայական գիտելիքի շրջանակներում սիմվոլի սահմանման խնդրի լուծումը, կարծում ենք, հնարավոր է դրա տարածական և ժամանակային առանձնահատկությունների ուսումնասիրությամբ: Սիմվոլի տարածական առանձնահատկություններն սիմվոլի բովանդակությունը ձևական-սեմիոտիկական տեսանկյունից հստակեցնելու հնարավորություն են:

Մեթոդ

Հոդվածում նպատակահարմար ենք գտել կիրառել խնդրի ուսումնասիրության համաժամանակյա և տարաժամանակյա (սինխրոն և դիախրոն) մեթոդաբանական մոտեցումները, ընդ որում, այդ մեթոդաբանական մո-

տեցումներն աշխատանքում ոչ թե հակադրված են, այլ՝ համադրված: Վերջինս հնարավորություն է տվել հաշվի առնել սիմվոլի ընկալումը ժամանակի տվյալ պահին, հաղորդակցության տվյալ դաշտում, ինչպես նաև հետևել դրա մեկնաբանությանը փիլիսոփայության պատմության մեջ առհասարակ:

Արդյունքներ

Նշան հասկացության ընկալումը

Սիմվոլի շուրջ ձևավորված փիլիսոփայական գիտելիքի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ սիմվոլը ձևական-սեմիոտիկական տեսանկյունից նշան է, և խնդրի ուսումնասիրության այս տեսանկյունը ենթադրում է դրա հարաբերումը նշանին՝ դրանց միջև առկա նմանությունների և տարբերությունների հստակեցմամբ:

Հետմոդեռնիստական փիլիսոփայությունը շարունակում է նշանի դասական ըմբռնման քննադատությունը և հիմնավորում, որ մենք գործ ունենք լեզվի միջոցով հոդաբաշխված և նշանների միջոցով արտահայտված իրականության հետ. նշանի նշանակության որոշակիությունը տարրալուծվում է նշանակությունների այն ամբողջության մեջ, որտեղ այդ նշանն ամեն ինչ կարող է նշանակել: Հետևաբար, հետմոդեռնիզմի փիլիսոփայությունը առաջարկում է սիմվոլի ոչ դասական մեկնաբանության մի նոր այլընտրանք, ուր փոփոխվում են սիմվոլ հասկացության իմացաբանական, գոյաբանական և արժեքային նախկին բնութագրիչները:

«Նշանը»[1] որևէ խմբում տեղեկատվության փոխանակման ընթացքում առարկաների, երևույթների, հասկացությունների նյութականորեն արտահայտված փոխարինողն է (Лотман,1973, 76): Այն որևէ առարկայի ձևի (այն ձևի, որը ներկայացնում է առարկան) և նրա մասին տեղեկատվության միասնությունն է: Ընդ որում, փոխարինվող առարկայի մասին պատկերացումն այդ առարկայի տիպական կերպարն է (ոչ թե այդ դասի կոնկրետ առարկան, այլ այդ առարկան ընդհանրապես), որը կոչվում է դենոտատ: Վերջինս իր նշանային ձևի հետ կապվում է կայուն ասոցացիաների շնորհիվ, որը ձևավորում է նշանի նշանակությունը: Վերջինս սոցիալ-մշակութային բնույթ ունի. այն ձևի և բովանդակության սոցիալապես ամրագրված ասոցացիան է, որը նշանի տեղեկատվական

1 Ի սկզբանե «նշան» բառը կիրառվել է բժշկության, հետագայում՝ փիլիսոփայության և գիտության մեջ: Հասկացության հիմքում հունարեն «σημειον» բառն է, որը երկու նշանակություն է ունեցել՝ «նշան» և «ախտանշան»: Հատկանշական է, որ ախտանշան բառի համար հունարենն ունեցել է նաև կոնկրետ «τεκμηριον» տարբերակը, իսկ երբ խոսքը վերաբերում էր այն նշաններին, որոնք աշխարհի անտես իրերի մասին էին և որոնք պետք է մահկանացու մարդիկ «կարդային», ապա հին հույները կիրառել են «τεκμαιρεσναι» բառը: Պետք է ընդգծել, որ այդ ժամանակ բառը նշան չէր դիտվում և դրա նշանակման համար կիրառվել է «ονομα» բառը՝ «անվանելու», «անուն տալու» իմաստով: Եզրույթաբանական այս տարբերության մասին խոսել է Պարմենիդեսը: Մ.թ.ա. 5-րդ դարից սկսած՝ «σημειον», «τεκμηριον» (նշան, ախտանշան) հասկացությունները համարվել են հոմանիշներ, սակայն Արիստոտելն իր «Հռետորիկայում» դրանք տարբերակում է՝ σημειον/τεκμηριον խնդիրը տեղափոխելով տրամաբանության բնագավառ: Τεκμηριον նշանները նա բնութագրում է որպես «անհրաժեշտ», և դարձնում է սիլլոգիզմի խիստ անհրաժեշտ մաս (Аристотель, էջ 34):

կենտրոնն է:

Ձևը, նշանակությունը և դենոտատը նշանի կառուցվածքային բաղադրատարրեն են: Նրանց միջև կապերը պարզորոշ ներկայացնում է գերմանացի փիլիսոփա և մաթեմատիկոս Գ. Ֆրեգեի եռանկյունին (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1

Այս գծապատկերում կետագծերն այն իմաստն ունեն, որ ձևը և դենոտատը իրար հարաբերվում են ոչ թե անմիջականորեն, այլ՝ նշանի միջոցով: Նշանակությունն արտացոլվում է նշանակության մեջ, նշանակությունը նշանայնությամբ է օժտում ձևը, ինչի արդյունքում էլ ձևը ներկայացնում է դենոտատը:

Նշանների մի քանի դասակարգումներ

Փիլիսոփայական գրականության մեջ նշանների բազմաթիվ (երբեմն վիճելի ու հակասական) դասակարգումներ կան: Հաճախ նշանները բաժանվում են լեզվական և ոչ լեզվական, բնական և արհեստական տեսակների: Առաջին բաժանումն առաջարկել է Էդ. Հուսեռլն իր «Տրամաբանական հետազոտություններ» աշխատության մեջ, որտեղ նա ոչ լեզվական նշանները ցուցանշաններ է անվանում (Alzeichen), իսկ լեզվական նշանները՝ արտահայտանշաններ (Ausdrucke) (Шафф, 1963, էջ 180): Համաձայն Հուսեռլի՝ ցուցանշանները մեր ուշադրությունն ուղղում են մեկ ուրիշ բանի, կամ փոխարինում են դրան, իսկ երկրորդներն օժտված են նշանակությամբ կամ «նշանակություն ունեն»: Հարկ է փաստել, որ նշանների այս դասակարգումը ոչ միանաշանակ գնահատականների է արժանացել: Օրինակ՝ Չ. Մորիսն անդրադառնալով այս դասակարգմանը, մասնավորապես «նշանակություն ունենալ» ձևակերպմանը, այն ընդունելի է համարում, քանի որ ըստ հեղինակի՝ «նշանակություն ունենալ», «արտահայտել» հասկացություններն իրենց բազմիմաստության պատճառով չեն կարող սեմիոտիկայի հիմնական հասկացություններ համարվել, ուստի սեմիոտիկական խնդիրների քննարկման ժամանակ դրանց կիրառությունն աննպատակահարմար է:

Մասնագիտական գրականության մեջ որոշակի ընդունելության է ար-

ժանացել բնական և արհեստական նշանների այն տարբերակումը, որն առաջարկվել է Լ. Ռեզնիկովի կողմից: Վերջինիս համաձայն բնական են այն նշանները, որոնք մարդկանց նպատակաուղղված գործունեությունից կախված չեն և պարզապես մեկնաբանվում են նրանց կողմից, իսկ արհեստական են այն նշանները, որոնք ստեղծվում են նպատակաուղղված գործունեության արդյունքում՝ որպես հաղորդակցության գործընթացի անհրաժեշտ միջոցներ (Резников, 1963, էջ 36): Ընդ որում, արհեստական նշանները կարող են կյանքի կոչվել մարդկանց գիտակցված, նպատակաուղղված պայմանավորվածության արդյունքում (օրինակ՝ ցանկացած կոդ) և կարող են բխել հասարակական-պատմական գործընթացից օրինակ՝ հնչյունային լեզուն), որի դեպքում, որոշիչ է պատմական-սոցիալական գործունեությունը (Шафф, 1963, էջ 179):

Արհեստական նշանները բաժանվում են իրենց գործառութային նշանակության հիմքով: Այսպես, օրինակ, նշանները կարող են մարդկանց գործունեության վրա անմիջական ներգործության, փոխարինման և այլ գործառույթներ իրականացնել: Օրինակ, նշանների ամենապարզ տեսակների՝ ազդանշանների գլխավոր նպատակը որևէ գործողություն սկսելը, փոխելը կամ հետաձգելն է: Այլ արհեստական նշաններից դրանք տարբերվում են նրանով, որ դրանց իմաստը ձևակերպվում է կամայականորեն: Նշանները կարող են նաև փոխարինել որևէ առարկա, երևույթ և հարաբերություն:

Ն. Ն. Ռուբցովն առանձնացնում է նշանների հետևյալ տեսակները՝ գրաֆիկական, պլաստիկ-դիսկուրսիվ, գործընթացային, օպերացիոնալ, լեզվաբանական և համակցված:

Փիլիսոփայական գրականության մեջ առավել ընդունելի է համարվում Չ. Պիրսի դասակարգումը (19-րդ դար), որտեղ նշանների տարանջատման հիմքում ընկած է նշանի և նրա օբյեկտի միջև փոխհարաբերությունը (որը անվանվում է նաև ձևի և դենոտատի, նշանի և ռեֆերենտի, նշանի և առարկայի, նշանակչի և նշանակյալի միջև հարաբերություն): Կախված այն բանից, թե ինչպիսի հարաբերություններ ունեն նշաններն իրենց դեսիգնատների նկատմամբ, Չ. Պիրսը նշանները բաժանում է երեք խմբի՝ իկոնիկ նշաններ, ինդեքսային նշաններ և սիմվոլներ (Елина, 2009, էջեր 46-48): Իկոնիկ նշաններում այդ հարաբերությունը հիմնված է նշանակչի և նշանակյալի միջև փաստական նմանության, ինդեքսային նշաններում՝ նման լինելու, իսկ սիմվոլներում՝ համաձայնության, պայմանավորվածության վրա: Այսպես, կենդանու նկարն իկոնիկ նշանի օրինակ է, ծուխը՝ ինդեքսային նշան կրակի համար, իսկ մաթեմատիկական ինտեգրալ նշանը սիմվոլի օրինակ է, որը նշանակում է անընդհատ գումարման գործողությունը:

Նշանների դասակարգման նույն սկզբունքից է ելնում նաև Չ. Մորիսը (Моррис, 1983, էջեր 37-90), քանի որ այդպիսի դասակարգումը, համաձայն նրա, հնարավորություն է տալիս վերացարկվելու նշանների շատ մասնավոր հատկանիշներից:

Իկոնիկ նշանների տարբերությունն այլ նշաններից սկզբունքորեն

տարբերվում են նրանով, որ նշանի ձևը իր վրա է վերցնում նշանակության գործառույթը՝ դառնալով դենոտատի մասին տեղեկատվություն: Ձևը և դենոտատը համանմանության հարաբերության մեջ են, նշանակչի և նշանակյալի միջև առկա է փաստական նմանություն: Օրինակ՝ մարդու (կենդանու) որևէ լուսանկար: Այստեղ նշանի ձևը կարծես նմանակում է բովանդակությանը կամ նշանի ձևից կարելի է ճանաչել բովանդակությունը:

Ինդեքսային նշաններն այլ կերպ կոչվում են ցուցանշաններ: Նրանց գլխավոր առանձնահատկությունն այն է, որ նշանում ձևը և դենոտատը կից են. սահմանակից են տարածության և ժամանակի մեջ: Նշանների այս ենթախմբում նշանի ձևը նշանակության հետևանքն է, իսկ նշանակությունը՝ ձևի պատճառը: Ինդեքսային նշան չի կարող լինել, եթե օբյեկտի կողքին չենք տարածության և ժամանակի մեջ: Այսպիսին են բնական, բնության կողմից ստեղծված նշանները, ինչպես նաև մարդկանց կողմից ստեղծված որոշ արհեստական նշաններ:

Քննարկում

Սիմվոլ կամ սիմվոլ-նշաններ

Սիմվոլ-նշաններն այլ կերպ կոչվում են նաև պայմանական (կոնվենցիոնալ) նշաններ: Այս նշաններում դենոտատը նշանի ձևի հետ փոխկապակցվում է որոշակի պայմանի կամ համաձայնության արդյունքում (որը հայտնի է այն օգտագործողներին): Պայմանական նշանի գլխավոր տարբերակիչ գիծն այն է, որ իր արտահայտման ձևի առումով այն որևէ կերպ նման չէ դենոտատին: Այսինքն՝ սիմվոլը լինի բառային, գունային, թե սխեմատիկ, նման չէ նշանակվող առարկային. նշան-սիմվոլի ձևը ոչ մի պատկերացում չի տալիս իր բովանդակության մասին:

Սիմվոլը երկու առարկա (կամ երևույթ, հարաբերություն) այնպես է փոխկապակցում, որ մի առարկայի իմաստը փոխանցվում է մյուսին: Այդ իսկ պատճառով այս խնդրով զբաղվող շատ հեղինակներ սիմվոլում միմյանց հետ սեմիոտիկորեն փոխկապակցված երկու կողմ են առանձնացնում՝ նշանակիչ և նշանակյալ (Ն. Հարությունովա, Ժ. Լական), արտահայտման դաշտ և բովանդակային դաշտ (Յու. Լոտման), սիմվոլացնող և սիմվոլացվող (Պ. Ֆլորենսկի), մորֆեմա և մետամորֆեմա (Կ. Սվասյան): Չ. Պիրսի համակարգում այդ կառուցվածքային բաղադրիչները կոչվում են ռեպրեզենտամենտ-ինտերպրետատնտա-օբյեկտ:

Նշանի կառուցվածքային տարրերի միջև սեմիոտիկական փոխհարաբերությունները երկու մեծ դասի են բաժանվում՝ դիֆերենցիալ (լեզվական) և ռեֆերենցիալ (արտալեզվական): Առաջին դասը կապեր ու հարաբերություններ է հաստատում նշանների միջև, իսկ երկրորդը՝ նշանների և իրականության միջև:

Սիմվոլի դիալեկտիկայի համաձայն նշանակիչն ու նշանակյալը միևնույն ժամանակ պետք է լինեն նման և լինեն տարբեր: Նմանությունը ապահովում է վերաներկայացման (ռեպրեզենտացիայի) հնարավորությու-

նը, իսկ տարբերությունը թույլ է տալիս խուսափել կրկնաբանությունից:

Իրականության սիմվոլային վերաներկայացումը կապում է գիտությունը և արվեստը. այն մի կողմից ապահովում է համապատասխանությունը օբյեկտիվ իրականությանը, իսկ մյուս կողմից պատկերային ձևով բացահայտում է կեցության ճշմարտությունները: Այսպիսի վերաներկայացումը ունի երեք հիմնական բաղադրիչներ՝ նշանակիչ (означающее, signans), նշանակյալ (означаемое, signatum), նշանակում՝ սեմիոտիկական կապ (означивание):

Ս. Լանգերը, խոսելով վերաներկայացման նշանային և սիմվոլային տեսակների տարբերությունների մասին, նշում է, որ նշանային վերաներկայացման հիմնական բաղադրիչներն են սուբյեկտը, նշանը և օբյեկտը: Նշանը ուղղորդում է օբյեկտին սուբյեկտիվ կապի շնորհիվ: Մինչդեռ սիմվոլային վերաներկայացման բաղադրիչներն են սուբյեկտը, սիմվոլը, օբյեկտը, պատկերացումը, որտեղ սիմվոլը սուբյեկտիվ մեկնաբանության շնորհիվ օբյեկտը բնութագրող պատկերացում է առաջացնում: Այդ պատճառով սիմվոլը նշանակման, դենոտացիայի և կոնոտացիայի միասնություն է: Նշանակմամբ համադրվում են նշանակիչն ու նշանակյալը, դենոտացիայի միջոցով լուծվում է նշանակչի օբյեկտային համապատասխանության հարցը, իսկ կոնոտացիայի շրջանակներում համադրվում են նշանակիչն ու այն պատկերացումը, որն արտահայտում է նշանակյալը: Հեղինակի համոզմամբ սիմվոլային վերաներկայացման յուրահատկությունն այն է, որ սիմվոլը յուրաքանչյուր դենոտատի համար իր կոնոտացիան ունի (Лангер, 2000, էջ 62), այսինքն՝ սիմվոլացվողը սիմվոլացվում է որոշակի պատկերացման միջոցով, ինչը և ապահովում է սիմվոլացնողի և սիմվոլացվողի միջև մեկնաբանական կապը: Սիմվոլի դեպքում սիմվոլացվողն ու սիմվոլացնողը կապվում են իմաստաբանական բովանդակության, իսկ նշանի դեպքում՝ սինտակտիկական կապի միջոցով:

Ռ. Բարթը համոզված է, որ նշանակումը՝ որպես նշանակչի և նշանակյալի միջև իմաստային կապի հաստատում, ունի իր կառուցվածքը և իրականանում է ինտենցիոնալ գործընթացների միջոցով, որոնք մի կողմից արտահայտում են նշանակիչն ու նշանակյալը, իսկ մյուս կողմից՝ կապում դրանք:

Սիմվոլի նշանակությունն ունի իր տրամաբանական և իմաստաբանական կողմերը: Իմաստաբանական նշանակության դեպքում նշանակչի և նշանակյալի միջև կապը պատճառահետևանքային է, մեկը բխում է մյուսից: Սեմանտիկական նշանակության դեպքում կապն ասոցատիվ է, այսինքն՝ մեկը նշանակությունը փոխանցում է մյուսին, կամ մեկն ինչ-որ առումով հիշեցնում է մյուսը: Այս կապակցությամբ Ս. Լանգերը նշում է, որ սիմվոլի նշանակությունն ինքնին գոյություն չունի, չի կարող սահմանվել առանց օբյեկտի և սուբյեկտի: Մի կողմից նշանակությունը միշտ հարաբերակցվում, առնչվում է որևէ օբյեկտի հետ (ռեալ, վիրտուալ, իդեալական), իսկ մյուս կողմից՝ բացահայտվում է որոշակի սուբյեկտի համար(Лангер, 2000, էջ 20):

Ֆ. դը Սոսյուրը նշանակչի և նշանակյալի միջև փոխհարաբերությունները բաժանում է հետևյալ տեսակների՝ ասոցատիվ (սիմվոլի ներքին կառուցվածքով պայմանավորված) և սինտագմատիկ (իմաստային ենթատեքստով պայմանավորված):

Պետք է նկատի ունենալ, որ նշանակչի և նշանակյալի ասոցատիվ դաշտերը կարող են լինել անհատական (կոնկրետ ասոցացիաներ, որոնք պայմանավորված են սուբյեկտի անձնական փորձով) և կոլեկտիվ (ասոցացիաներ, որոնք պայմանվորված են տարբեր սերունդների փորձով): Կոլեկտիվ ասոցատիվ դաշտը կարող է պայմանավորված լինել սոցիալ-մշակութային համատեքստով, արխետիպերով, սոցիալ-մշակութային իրավիճակների հաստատուններով: Նշանակչի և նշանակյալի ասոցատիվ դաշտերի ներաճումը ձևավորում է սիմվոլի իմաստային դաշտը:

Սիմվոլի մեկնաբանության ժամանակ բացահայտվում է նրա տրամաբանական նշանակությունը և հոգեբանական իմաստը: Երբ սիմվոլը սուբյեկտի համար ինչ-որ բան է նշանակում, այսինքն այն կոնկրետ իմաստ ունեցող նշաններ է մատնանշում, ապա դրա նշանակությունը տրամաբանական բնույթ ունի: Իսկ երբ սիմվոլը հիմնական իմաստից զատ ենթադրում է այլ իմաստներ, որոնք մեկնաբանման կարիք ունեն, ապա սիմվոլի նշանակությունը սեմանտիկական է և հոգեբանական բնույթի: Ս. Լանգերը գրում է, որ «Այսպիսով, նշանակության հակասական երկու տեսակներ՝ տրամաբանականն ու հոգեբանականը, տարբեր են, բայց միաժամանակ կապված են այն ընդհանուր սկզբունքի միջոցով, որ նշանակությունը հատկանիշ չէ, այլ գործառույթ» (Лангер, 2000, էջեր 52-53): Տրամաբանական նշանակությունը, ի տարբերություն հոգեբանականի, կոնկրետ է և մեկնաբանման կարիք չունի: Հոգեբանական նշանակությունը բացահայտվում է ասոցատիվ դաշտում, որտեղ սիմվոլի նշանկյալը դառնում է նշանակիչ: Այսպիսով, երբ նշանկյալը նշանակիչ է դառնում՝ նշանը վերածվում է սիմվոլի, մեծանում է տեքստի էնթրոպիան: Հակառակ դեպքում սիմվոլն իջնում է նշանի մակարդակի: Հետևաբար, նշանակության հոգեբանական տեսակն ընդլայնում է սիմվոլների շարքը և նպաստում է դիցի ձևավորմանը:

Նշանակչի և նշանակյալի ասոցատիվ դաշտերի փոխազդեցության արդյունքում նոր իմաստային սահմաններ են ստեղծվում. ծնվում են բազմաթիվ մեկնաբանություններ, և սիմվոլը ձեռք է բերում իմաստային ձևակերպումների նոր հնարավորություններ: Ս. Ս. Ավերինցևը գրում է, որ այդ իմաստների մեկնաբանությունը գիտական չի կարող լինել, սակայն այն խորապես ճանաչողական է(Аверинцев, 1985, էջ 299): Ժ. Պ. Գիլյանին, խոսելով սիմվոլի հերմենևտիկական էության մասին, գրում է, որ սիմվոլն արտահայտում է մարդու ճանաչելու կարողության մակարդակը. յուրաքանչյուրը սիմվոլից վերցնում է միայն այն, ինչը հասկացել է....(Гильяни, էջ 71): Պետք է նշել, որ սիմվոլին բնորոշ է նշանակչի և նշանակյալի սերտաճումը. որևէ մեկի փոփոխությունը, ենթադրում է փոփոխություն նաև մյուսում: Նշանակյալն առկա է նշանակչում, կայանում է դրանում և փոփոխ-

վում է այն փոփոխությունների համեմատ, որին ենթարկվում է նշանակիչը:

Պ. Սորոկինը ներմուծում է սիմվոլի ֆետիշացման օրենքը. երբ որևէ առարկայի ինքնուրույն արժեք է տրվում, այդ արժեքը նա յուրացնում է այն առարկայից, որին փոխարինում է, օրինակ դրոշը՝ որպես պետության սիմվոլ: Դա է պատճառը, որ սիմվոլն ավելի ազդեցիկ է վարքի վրա, քան նշանը: Այսինքն՝ էքզիստենցիալ հարաբերության մեջ սիմվոլը հաղթում է նշանին: Սիմվոլներն ավելի շարժուն են, (ավելի դինամիկ բնույթ ունեն) քան նշանները: Սիմվոլները կարող են փոխվել մեկնաբանությունների, իմաստային ենթատեքստի փոփոխություններին համապատասխան: Կարելի է ասել, որ եթե նշանային համակարգը սեմիոտիկական կառուցակարգ է, ապա սիմվոլների համակարգը՝ սեմիոտիկական օրգանիզմ:

Սիմվոլ հասկացությունը հետմոդեռնիզմի փիլիսոփայության շրջանակներում

Հետմոդեռնիստական փիլիսոփայությունը շարունակում է նշանի դասական ըմբռնման քննադատությունը և հիմնավորում, որ անհրաժեշտ է հրաժարվել այն իմաստից, որը երաշխավորում է արտատեքստային ռեֆերենտը: Այն աշխարհը մեկնաբանում է որպես լեզվի միջոցով հոդաբաշխված և նշանների միջոցով արտահայտված իրականություն:

Դասական փիլիսոփայության այն պահանջը, որ դենոտատի և դրա նշանակության միջև խիստ համապատասխանություն պետք է լինի, հետմոդեռնիզմում փոխարինվում է նշանակության ծրագրային «բացվածությամբ»: Այդ փոխարինումը հնարավոր է դարձնում նշանակության տարբեր մեկնաբանությունները: Նշանակությունը կախվածության մեջ է դրվում մշակութային պատկանելիությունից, և նշանի նշանակության որոշակիությունը տարրալուծվում է նշանակությունների այն ամբողջության մեջ, որտեղ այդ նշանն ամեն ինչ կարող է նշանակել: Հետմոդեռնիզմի փիլիսոփայությունը քննադատում է ռեֆերենցիալ նշանի գաղափարը և չի ընդունում, որ նշանն ունի «կայուն» նշանակություն և իմաստ: Այս փիլիսոփայությունը նշանի ռեպրեզենտատիվ տեսությունից ծրագրային հրաժարում է. այս համատեքստում նշանակությունը ձևն ու բովանդակությունը իրար կապող գործընթաց է, և դրա կայունությունը չի ապահովվում նշանակչի գոյաբանական որոշակիությամբ: Նշանակության այսպիսի ըմբռնման համատեքստում նշանակիչն ու նշանակյալը վերածվում են միևնույն գործընթացի կողմերի. նշանակությունը դառնում է թվացյալ նշանակություն, որն առաջանում և ձևակերպվում է նշանակյալների հարաբերակցությունից: Սա է պատճառը, որ հետմոդեռնիզմը հրաժարվում է նշանակչի և նշանակյալի միջև կապի գոյաբանական հիմքից:

Քննադատելով ավանդական մետաֆիզիկական մտածողությունը, պոստմոդեռնիստները հնարավոր են համարում միևնույն իրականության գոյաբանական տարբեր մոդելներ, քանի որ դրանք բոլոր դեպքերում լեզվական բնույթ ունեն: Առարկայական աշխարհից լեզվի անկախության ու

ինքնավարության, ինչպես նաև բազմաթիվ գոյաբանությունների հնարավորությունների գաղափարներն այս փիլիսոփայությունը տարբերում են անգամ այն ուսմունքներից, որոնք իրենց ուսումնասիրություններն իրականացնում են «նշան» փիլիսոփայական հասկացության միջոցով: Ընդգծելով սոցիալական և մշակույթի ոլորտում ընթացող գործընթացների սիմուլյատիվ բնույթը՝ պոստմոդեռնիստներն առանձնակի ուշադրություն են դարձնում այն գործոններին, որոնք ձևախեղում են իրականությունը, վերածում այն օբյեկտիվ իմաստից զուրկ նշանային իրականության՝ հիպերիրականության: Քննարկում են ձևավորվող «նոր» իրականության ստեղծման կառուցակարգերը:

Եզրակացություն

Ելնելով վերոգրյալից կարելի է փաստել, որ «սիմվոլ» հասկացությունը փիլիսոփայության ամենաքննարկված, բազմաբովանդակ և տարողունակ հասկացություններից է: Նույն «սիմվոլ» փիլիսոփայական միավորի տակ կարելի է հասկանալ և՛ լիարժեք չգիտակցված ինտուիցիա, և՛ վերացարկման ամենաբարձր մակարդակում գտնվող փիլիսոփայական հասկացություն:

Հասկացության փիլիսոփայական կարգավիճակը և մեկնաբանությունն ամեն անգամ պարզորոշվում է այն առանձին տեսությունների համատեքստում, որոնցում հեղինակներն իրենց ողջամիտ բացատրությունն են առաջարկում այդ երևույթին, ձևակերպում են բազմաթիվ սահմանումներ: Սակայն հասկացության խնդիրը մինչ այսօր փիլիսոփայության մեջ լուծված չէ: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ սիմվոլի սահմանման խնդիրը ոչ թե վերջնական սահմանում փնտրելու և գտնելու, այլ՝ սիմվոլի ընդհանրական բնույթը բացահայտելու և հասկանալու մեջ է:

Հետմոդեռնիզմի փիլիսոփայությունը «սիմվոլ» հասկացության զարգացման նոր, համեմատաբար ինքնուրույն փուլ է, քանի որ այս փիլիսոփայության շնորհիվ ձևակերպվում է նշված հասկացության ոչ դասական մեկնաբանության մի նոր այլընտրանք, ուր փոփոխվում են սիմվոլ հասկացության իմացաբանական, գոյաբանական և արժեքային նախկին բնութագրիչները:

Օգտագործված գրականության ցանկ

Նալչաջյան, Ա. (2001): *Էթնիկական հոգեբանություն:* Եր., Զանգակ:

Սուքիասյան, Ա. (1967): *Հումանիշների բառարան:* Եր., ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիա:

Аверинцев, С.С. (1985). *Заметки к будущей классификации типов символа. Проблемы изучения культурного наследия.* М.: Наука.

Аристотель, (1894). *Риторика.* М.: Изд–во Моск. ун–та.

Гадамер, Г. (1991). *Актуальность прекрасного.* М.: Искусство.

Гильяни, Ж.–П. (2010). *Алфавит человеческого тела.* СПб.: Меридиан–С.

Евзлин, М. (1993). *Космогония и ритуал.* М.: Радикс.

Елина, Е.А. (2009). *Семиотика рекламы. М.: Дашков и Ко.*

Лангер, С. (2000). *Философия в новом ключе. Исследование символики разума, ритуала и искусства.* М.: Республика.

Лосев, А. Ф. (1995). *Проблема символа и реалистическое искусство.* М.: *Искусство.*

Лосев, А. Ф. (1982). *Знак. Символ. Миф. М.: Изд–во Моск. ун–та.*

Лотман, Ю. (1973).Семиотика кино и проблемы киноэстетики. Т.: Ээсти Раамат.

Моррис,Ч. (1983). *Основания теории знаков.* Семиотика. М.: Радуга.

Резников, Л. (1964). *Гносеологические вопросы семиотики.* Л.: ЛГУ.

Розин,В. (2003). *Культурология.* М.*: Гардарики.*

Шафф, А. (1963). *Введение в семантику.* М.: Изд–во иностранной литературы.

Юнг К. Г. и др. (Мария–Луиза фон Франц, Хендерсон Джозеф Л., Иоланда Якоби, Аниела Яффе) (2006) *Человек и его символы.* М.:Медков.

References

Nalchajyan, A. (2001). *Etnikakan hogebanutyun* [Ethnic psychology]. Er. Zangak. (In Arm.)

Suqiasyan, A. (1967) *Homainshneri bararan* [Dictionary of Synonyms]. Er. HSSH. (In Arm.)

Averintsev, S.S. (1985). *Zametki k budushchey klassifikatsii tipov simvola., Problemy izucheniya kul'turnogo naslediya* [Notes for the future classification of symbol types. Problems of studying cultural heritage]. M. Nauka. (In Rus.)

Aristotel', (1984). *Ritorika* [Rhetoric]. M. Izd–vo Mosk. un–ta. (In Rus.)

Gadamer, G. (1991). *Aktual'nost' prekrasnogo* [The relevance of the beauty]. M. Iskusstvo. (In Rus.)

Gil'yani, Zh–P. (2010). *Alfavit chelovecheskogo tela* [Human body alphabet]. SPb. Meridian–S. (in Rus.)

Evzlin, M. (1993). *Kosmogoniya i ritual* [Cosmogony and ritual]. M. Radiks. (In Rus.)

Elina, E.A. (2009). *Semiotika reklamy* [Semiotics of advertising], M. Dashkov i Ko. (In Rus.)

Langer, S. (2000). *Filosofiya v novom klyuche., Issledovanie simvoliki razuma, rituala i iskusstva* [Philosophy in a new key. Study of the symbolism of mind, ritual and art]. Respublika. (In Rus.)

Losev, A. (1995). *Problema simvola i realisticheskoe isskustvo* [The problem of a symbol and art realistic]. M. Iskusstvo. (In Rus.)

Losev, A. (1982). *Znak. Simvol. Mif* [Sign. Symbol. Myth]. M. Izd–vo Mosk. un–ta. (In Rus.)

Lotman, Yu. (1973). *Semiotika kino i problemy kinoestetiki. Semiotika kino i problemi kinoestetiki* [Semiotics of cinema and problems of cinema aesthetics]. T. Eesti Raamat. (In Rus).

Morris, Ch.U. (1983). *Osnovaniya teorii znakov. Semiotika.* [Foundations of the theory of signs. Semiotics], M Raduga. (In Rus.)

Reznikov, L.O. (1964). *Gnoseologicheskie voprosy semiotiki* [Epistemological problems of semiotics]. L. LGU. (In Rus.)

Rozin, V. (2003). *Kul'turologiya* [Culturology]. M. Gardariki. (In Rus.)

Shaff, A. (1963). *Vvedenie v semantiku* [Introduction to semantics]. M. Izd–vo inostrannoy literatury. (In Rus.)

Yung, K. G. i dr. (Mariya–Luiza fon Frants, Khenderson Dzhozef L., Iolanda Yakobi, Aniela

Yaffe) *Chelovek i ego simvoly* [Human and his symbols]. M. Medkov. (In Rus.)

Лилит Алексанян
Соискатель кафедры теоретической философии и логики ЕГУ,
Помощник депутата Национального собрания РА
Эл. адрес: alexy.ph@mail.ru

СИМВОЛ С ТОЧКИ ЗРЕНИЯ ПРОСТРАНСТВЕННЫХ ОСОБЕННОСТЕЙ

Исходя из вышеизложенного, следует отметить, что понятие «символ» – одно из самых обсуждаемых, многогранных и емких понятий в философии. Его можно интерпретировать и как интуицию, и как философское понятие, на высшем уровне абстракции. Философский статус и объяснение концепции дают авторы, которые пытались объяснить, сформулировать и определить это явление. Однако проблема определения понятия символа до сих пор не решена в философии. В этой связи следует отметить, что решить проблему символа в философии – это не значит искать и найти окончательное определение символа, а открыть и понять природу этого понятия.

Философия постмодернизма представляет собой новый, относительно самостоятельный этап в развитии концепции «символа», поскольку создает новую альтернативу неклассической интерпретации концепта, изменяющей гносеологические, онтологические и ценностные характеристики концепта символа.

Ключевые слова: символ, знак, значение, форма знака, денотат, десигнат, постмодерн.

Lilit Aleksanyan
Ph.D. student at the Department of Theoretical Philosophy and Logic at YSU,
Assistant to Member of Parliament of Armenia
Email: alexy.ph@mail.ru

SYMBOL FROM THE POINT OF VIEW OF SPATIAL CHARACTERISTICS

The concept of “symbol” is one of the most discussed, multifaceted and capacious concepts in philosophy. It can be interpreted both as an intuition, and as a philosophical concept at the highest level of abstraction. The philosophical status and explanation of the concept is specified in the context of individual theories, where the authors try to explain, formulate and give various definitions of this phenomenon. However, the problem of defining the concept of symbol, hasn’t been solved in philosophy yet. In this regard, it should be noted that the problem of symbol in philosophy isn’t in the search and detection of final definition of symbol, but to discover and understand the nature of its concept.

As a relatively new independent phase in the development and interpretation of symbol, the philosophy of postmodernism formulates the so-called ''non-classical'' interpretation of the symbol as a new alternative version, as it reformulates and changes, the epistemological, ontological and value characteristics of the concept of the symbol, which were accepted in the previous philosophical systems.

Key Words: symbol, sign, meaning, the form of sign, denote, designate, postmodern.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2020թ. ապրիլի 10-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման 2020թ. ապրիլի 15-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության 2020թ. հուլիսի 15-ին: